«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Խոսքային հաղորդակցում»

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Արզումանյան Անահիտ

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Լոռու մարզի Այգեհատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2023

# Բովանդակություն

1.Ներածություն_____ 3

2.Խոսք և հաղորդակցություն _____4

2. Հաղորդակցություն_____10

3.Հաղորդակցության տեսակները_____11

4.Բարեկիրթ հաղորդակցություն_____12

5.Խոսքային ժանրեր _____13

5.Եզրակացություն_____14

6.Օգտագործված գրականության ցանկ_____15

# Ներածություն

Դժվար է գերագնահատել տարրական կրթության դերը հանրակրթության համակարգում, քանի որ այն հանրակրթության հիմքն է: Ուստի բնական է, որ ուսուցման այս փուլն ունի այնպիսի առանձնահատկություններ, որոնք առանցքային տարբերակում են մտցնում տարրական կրթության և հանրակրթության հետագա մյուս փուլերի միջև: Այս առանձնահատկությունները պայմանավորված են մի կողմից սովորողների տարիքային առանձնահատկություններով, մյուս կողմից՝ կրթական համակարգի նախնական փուլի պայմաններով:

Այս փուլում տեղի է ունենում ուսումնական հմտությունների, այսինքն՝ որոշակի ուսումնական գործողություններ կատարելու կարողությունների, ինչպես նաև ճանաչողական հետաքրքրասիրությունների և դրդապատճառների ձևավորումը: Ուսուցման բարենպաստ պայմանների պարագայում ձևավորում և զարգանում են նաև երեխայի ինքնագիտակցությունը և ինքնագնահատման կարողությունը:

Այս տարիքային փուլին բնորոշ է նաև այն, որ ի հայտ է գալիս շրջապատող մարդկանց, իր և բարոյաէթիկական նորմերի մասին պատկերացումների բավականին գիտակցված համակարգ, որի հիման վրա էլ երեխան կառուցում է հասակակիցների և մեծահասակների, ծանոթ և օտար մարդկանց հետ իր հարաբերությունները:

# Խոսք և հաղորդակցություն

## ա/Խոսքի և հաղորդակցության դերը կրթության մեջ

Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է տարրական կրթության հիմնական նպատակները, տարրական դպրոցի սովորողի.

- մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների զարգացումը,
- լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության աշխարհահայացքային պատկերացումների հիմքերի ստեղծում,
- աշխատանքային նախնական հմտությունների ստեղծումը,
- բարեկիրթ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքերի ձևավորումը,
- բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակությունը և առողջ ապրելակերպի հիմքերի ձևավորումը,
- միջին դպրոցական ուսումը շարունակելու համար պահանջվող կրթամակարդակի ապահովումը:

Հանրակրթական պետական չափորոշիչը այս նպատակներին համապատասխան սահմանում է նաև այն հիմնական կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևավորել կրթության տարրական փուլում:

Դրանցից ընտրենք մեր նպատակին համապատասխանողները: Ակնկալվում է, որ հետևողական և նպատակասլաց ջանքերի արդյունքում տարրական դպրոցի շրջանավարտը պետք է կարողանա.

- հայերենով հաղորդակցվել մեծահասակների, հասակակիցների և փոքրերի հետ, ընկալել ուրիշների խոսքը և արտահայտել սեփական մտքերը,
- կարդալ և հասկանալ գրավոր պարզ տեքստեր, գրավոր շարադրել պարզ տեքստեր,
- տրամաբանական եզրակացություններ անել պատճառահետևանքային կապերի վերաբերյալ
- սովորել և սովորեցնել, տիրապետել սովորելու հիմնական հմտություններին,

- ինքնակազմակերպվել և ինքնուրույն գործունեություն ծավալել, ճիշտ գնահատել իր հնարավորությունները,
- կարողանալ աշխատել համագործակցված, լինել թիմի անդամ, լինել նախաձեռնող,
- գիտակցել և արժևորել իր ազգային ինքնությունը, հարգել և ընդունել ընտանեկան ու հասարակական կյանքի արժեքները,
- իմանալ իր իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատու լինել իր արարքների համար,
- ցուցաբերել հարգալից վերաբերմունք շրջապատի նկատմամբ, հանդուրժողականություն և զուսպ վարք,
- ունենալ համարժեք ինքնագնահատական:

Ինչպես տեսնում ենք, խիստ կարևորվում են աշակերտի սովորել սովորելու և հաղորդակցական կարողությունները: Բնական է, որ առաջադրված խնդիրների լուծման համար ուսուցիչը նախ և առաջ պետք է իրականացնի տարրական դպրոցի կարևորագուն խնդիրը՝ սովորել սովորեցնել: Սովորելու կարողությունն ապահովվում է այնպիսի <<ունիվերսալ ուսումնական գործողություններ>> իրականացնելու հմտությունների ձևավորման ճանապարհով, ինչպիսիք են.

- Կանոնակարգող, կազմակերպական գործողություններ,
- Ճանաչողական գործողություններ,
- Հաղորդակցական գործողություններ:

Մեր խնդրի՝ երեխայի հաղորդակցական կարողությունների զարգացման տեսանկյունից դիտարկենք ճանաչողական և հաղորդակցական կարողություններին ներկայացվող պահանջները:

Ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- ազատորեն և գիտակցված տիրապետել խնդիրների լուծման ընդհանուր հնարներին,
- ուսումնական խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեղեկատվություն որոնել,

- ուսումնական խնդիրների լուծման համար օգտագործել նշանային-խորհրդանշանային միջոցներ, այդ թվում նաև՝ մոդելներ և գծագրեր,
- խնդիրների լուծման բազմազան միջոցներ օգտագործել,
- տիրապետել գեղարվեստական և ճանաչողական տեքստերի իմաստային ընթերցանության հիմունքներին, կարողանալ տարբեր տեսակի տեքստերից դուրս բերել էական տեղեկությունը,
- կարողանալ վերլուծել երևույթները՝ առանձնացնելով էական և ոչ էական հատկանիշները,
- կարողանալ մասերը համադրելով՝ ստանալ ամբողջը,
- կարողանալ ըստ տրված չափանիշների համեմատել, տեսակավորել և դասակարգել:

Հաղորդակցական կարողությունների և հմտությունների ձևավորման արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- հասկանալ ուրիշների տեսակետը և դիրքորոշումը, որը տարբերվում է իր սեփականից,
- համագործակցելիս հաշվի առնել տարբեր տեսակետները և ձգտել համակարգել տարբեր դիրքորոշումները,
- հարցեր տալ,
- խոսքն օգտագործել իր գործողությունների կանոնակարգման նպատակով,
- համարժեք օգտագործել խոսքային միջոցները՝ տարբեր հաղորդակցական խնդիրների լուծման համար,
- մենախոսական խոսք կառուցել, երկխոսության մասնակցել,
- համատեղ գործունեության ընթացքում ընդհանուր որոշում կայացնելիս կարողանալ փաստարկել իր դիրքորոշումը և համադրել այն գործընկերների դիրքորոշման հետ,
- արդյունավետորեն լուծել կոնֆլիկտները՝ բոլոր մասնակիցների շահերը և դիրքորոշումները հաշվի առնելու հիման վրա,
- զրուցակցին անհրաժեշտ տեղեկատվությունը հաղորդել որոշակիորեն ճշգրիտ, հետևողական և լիարժեք,

- համագործակցելիս փոխադարձ օգնություն և վերահսկողություն իրագործել:

**բ/ Խոսք և հաղորդակցություն բաղադրիչը մայրենիի ծրագրում**

Մայրենիի առարկայական ծրագրերի ժամանակակից ուղղվածությունը աշակերտների խոսքային զարգացման հարցերում մղում են մեթոդական նոր որոնումների՝ դասի ընթացքում աշակերտների խոսքի զարգացման և, մասնավորապես, հաղորդակցական կարողությունների ձևավորման խնդիրների տեղի և դերի որոշման հարցում:

Տարրական դասարաններում, կարևորելով հարցի լրջությունը, տարիներ ի վեր ուսուցիչներին խորհուրդ է տրվել մայրենիի հատկացված ժամաքանակից, իբրև անհրաժեշտ բաղադրիչ, շաբաթական ժամերից մեկը հատկացնել աշակերտների խոսքային կարողությունների զարգացման խնդիրներին՝ բաղադրիչն անվանելով <<Խոսք և հաղորդակցություն>>: Սա միանգամայն հիմնավորվում է այն հանգամանքով, որ առարկայական ծրագրերում առկա են հետևյալ բաղադրիչները՝<<Խոսքային գործունեություն>> և <<Կապակցված խոսք>>, որոնք կոչված են վերոնշյալ խնդիրների լուծման նպատակին: Այլ խոսքով, այսօր առավել քան արդիական է այդ տիպի դասերի տեսակների և կառուցվածքի հետ կապված հարցերի մշակումը:

Լեզվի դասն առաջին հերթին աշակերտների խոսքի և մտածողության զարգացման դաս է: Տվյալ պահանջը պայմանավորված է ուսումնական առարկայի առանձնահատկությամբ, որի սոցիալական գործառույթը բացահայտվում է լեզվի հաղորդակցական գործառույթի մեջ:

Ընդունելով այս ժամերի կարևորությունը՝ չենք կարող չնշել, որ մինչ օրս դեռևս մշակված չէ այս ժամերի դասավանդման մեթոդիկան: Բացը թերևս մասնակիորեն լրացվել է առանձին մեթոդական խորհուրդներով, հոդվածներով կամ թեմատիկ պլանավորումների մեջ տեղ գտած մասնակի ուղղորդումներով: Այդուհանդերձ, դասավանդման մեթոդիկայի տեսական և գործնական հարցերը այս ճանապարհով լիովին լուծվել չեն կարող:

<<Խոսք և հաղորդակցություն>> ժամերի առանձնահատուկ հատկանիշներից մեկը խոսքային գործունեության հիմնական տեսակների /կարդալ, գրել, լսել, խոսել/ ուղղությամբ կազմակերպված համակարգված և նպատակամետ աշխատանքն է:

Այս տեսանկյունից խոսքի զարգացման ուղղությամբ մինչև այժմ կատարված աշխատանքները դժվար է լիարժեք համարել: Բանն այն է, որ միայն կապակցված խոսքի հմտությունների ուսուցումը չի կարող սպառել հարցի ողջ բազմազանությունն այն պարզ պատճառով, որ այն սովորաբար հանգեցնում է աշակերտների՝ տեքստերի վերաբերյալ արտահայտվելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Այս աշխատանքներում բառապաշարի հարստացման, աշակերների խոսքի լեզվական-քերականական կառուցվածքի մշակմանը զուգահեռ հաճախ անտեսվում են կյանքի տարբեր իրավիճակներում լեզվի հաղորդակցական գործառույթները և աշակերտների բարեկիրթ խոսքի մշակույթի ձևավորման խնդիրները: Այս ամենը պետք է հետևողականորեն և նպատակամետ ձևավորվեն հատուկ <<խոսքային>> դասերի ընթացքում:

Այս ժամերի արդյունավետ կազմակեպումը կնպաստի հաջողությամբ իրականացնել լեզվի ուսուցման հաղորդակցական և գործառութային մոտեցումը և կնպաստի աշակերտների խոսքի արդյունավետ զարգացմանը:

Պետք է նակտի ունենալ նաև, որ արդյունավետ հաղորդակցման կարողությունների նպատակով խոսքի զարգացումը միայն մայրենիի դասերի համար ու դրանց միջոցով չէ, որ տեղի է ունենում:

Մայրենի լեզվի ուսուցման մասին խոսելիս պետք է հստակ տարբերակել հարցի երկու կողմը. Մայրենի լեզուն՝ որպես ուսումնական առարկա և մայրենին՝ որպես կրթության լեզու: Կրթության լեզուն իմացության, ճանաչողության հիմքն է, հետևաբար բոլոր ուսումնական առարկաները յուրացվում են կրթության, դասվանդման լեզվի միջնորդությամբ: Մյուս կողմից՝ ուսումնական բոլոր առարկաներն էլ իրենց ներդրումն ունեն սովորողների լեզվական իրազեկությունների զարգացման գործում, քանի որ բոլորն էլ կրթության լեզուն օգտագործում են գիտելիքները յուրացնելու և ներկայացնելու համար: Ուսումնառության, ուսուցչի և գրքի հետ հաղորդակցության ընթացքումէ սովորողը յուրացնում բոլոր մյուս ուսումնական առարկաները:

Մայրենի լեզուն օտար լեզուների հետ միասին նպաստում է սովորողների բազմալեզվության զարգացմանը, մասնավորապես՝ խոսքի զարգացման միջոցով շփման և հաղորդակցության մշակույթի ձևավորմանը:

Կրթության կամ դասավանդման լեզվի նպատակը պետք է լինի լեզվական իրազեկությունների ձևավորումն ու զարգացումը ամենալայն իմաստով, լեզվի գործնական կիրառությունը, ինչպես նաև հասարակության մեջ լիարժեք կենսագործունեության համար հիմքերի ստեղծումը: Այդ խնդրի լուծմանը պետք է միտված լինեն նաև հաղորդակցության դասերը:

<<Հանրակրթական դպրոցի առարկաների ուսումնական չափորոշիչներում և ծրագրերում պետք է հստակորեն հաշվի առնվեն դասավանդման լեզվի առանձնահատկությունները, դերը և յուրաքանչյուր առարկայի դասընթացում հատուկ ուշադրություն դարձվի տվյալ մասնագիտությանը բնորոշ բառաշերտին, տերմինաբանությանը, լեզվի գործառնական ոճերին, կառուցվածքային առանձնահատկություններին և լեզվամտածողությանը:

**գ/ <<Խոսք և հաղորդակցություն>> բաժնի ուսուցման նպատակը, խնդիրները և կառուցվածքը**

Խոսքի զարգացումը, ներառյալ բարեկիրթ խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքը, պետք է լրացվի մեկ այլ խնդրով. ձևավորել այնպիսի անձ, որ տիրապետելով որոշակի բովանդակային նյութի, տեղեկատվության, կարողանա ճիշտ կողմնորոշվել կոնկրետ խոսքային իրադրության մեջ, իր խոսքը կառուցել այդ իրադրությանը համապատասխան, այդ թվում՝ հաշվի առնելով իր մտահղացումը, հաղորդակցական նպատակը և այլն: Այսինքն՝ արդյունավետորեն հաղորդակցվել:

Այս համատեքստում հարկ է ճշտել, թե ինչ ենք հասկանում արդյունավետ հաղորդակցություն ասելով: Արդյունավետ հաղորդակցությունը ենթադրում է ճիշտ, արդյունավետ և տեղին խոսք:

Անշուշտ, այն ճիշտ, այսինքն՝ գրական լեզվի նորմերին համապատասխան խոսքն է: Սակայն դա բավարար չէ: Արդյունավետ հաղորդակցումը ենթադրում է այնպես կառուցել խոսքը, որ հնարավոր լինի լուծել հաղորդակցական խնդիրը, հասնել

հաղորդակցական նպատակին: Այս տեսանկյունից կարող ենք խոսել հաղորդակցության հաջողության կամ անհաջողության նաև հաղորդակցական վրիպումների մասին, երբ հաղորդակցական խնդիրը չենք լուծում կամ մասնակի ենք լուծում:

Այսպիսով՝ սույն աշխատանքում տեղ են գտել խոսքի կառուցվածքային այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝

- հաղորդակցություն,
- հաղորդակցության տեսակները,
- բարեկիրթ հաղորդակցություն,
- խոսքային ժանրեր:

## Հաղորդակցություն

Հաղորդակցությունը, շփումը մարդկանց փոխազդեցությունն է, որի արդյունքում.
ա) շփվողները որոշակի տեղեկատվություն են փոխանակում՝ այդպիսով ճանաչելով շրջապատող աշխարհը, մարդկանց, այդ թվում նաև՝ինքն իրեն /տեղեկատվական-հաղորդակցական գործառույթ/:
բ) պլանավորում և կազմակերպում են իրենց գործունեությունը՝ կարգավորելով սեփական և գործընկերոջ վարքը /հաղորդակցական-կարգավորող գործառույթ/:
գ) ազդում/ներգործում են շփվողների/հաղորդակցվողների հուզական-զգայական ոլորտի վրա /աֆեկտի- հաղորդակցական գործառույթ/:

Երեխաների շփման և հաղորդակցության կարողությունների զարգացմանը նպաստող առաջադրանքներն ու վարժությունները նպատակ պետք է ունենան ձևավորել և զարգացնել.

**Հաղորդակցվելու , շփվելու կարողությունը,*

- հաղորդակցական խնդիրների լուծում, հաղորդակցական իրադրությունների խաղարկում,

- պատմությունների հորինում,
- հաղորդակցական իրադրություններում կողմնորոշվելու կարողություն,
- շփման խոսքային և ոչ խոսքային միջոցների տեղին օգտագործում,

***հաղորդակցությունը, շփումը վերլուծելու կարողությունը***

- հնարավորություն տալ երեխաներին հասկանալ, գիտակցել շփման, հաղորդակցման դերն իր կյանքում, մտածել, վերլուծել շփման, հաղորդակցության իր փորձը, խոսել դրա մասին, գնահատել հաղորդակցման իր կարողությունները, բարելավել դրանք:

Այս կարողությունների զարգացմանը նպաստող բավականին նյութ կա նաև մայրենիի դասագրքերում:

Այդուհանդերձ, կարծում ենք, որ խնդրի լուծման արդյունավետությունն ավելի կմեծանա կոնկրետ, հենց տվյալ կարողություններին հասցեագրված առաջադրանքներով:

## Հաղորդակցության տեսակները

Մարդիկ շփվում ու հաղորդակցվում են ամենատարբեր նպատակներով, ինչպես նաև տարբեր ձևերով: Կախված հաղորդակցության նպատակից, տեղից, ժամանակից և հասցեատիրոջից՝ մենք շփման ու հաղորդակցման տարբեր ձևեր ու միջոցներ ենք ընտրում: Ըստ այդմ էլ շփումն ու հաղորդակցումը կարող են լինել.

- խոսքային կամ ոչ խոսքային,
- բանավոր կամ գրավոր,
- միջանձնային կամ զանգվածային,
- մտերմիկ կամ գործնական, պաշտոնական և այլն:

Երեխաները պետք է սովորեն ոչ միայն տարբերակել, այլև, որ ավելի կարևոր է, ակտիվորեն, տեղին և արդյունավետորեն օգտագործել շփման ու հաղորդակցության տարբեր ձևերը: Ընդ որում, տարրական դպրոցի տարբեր դասարաններում նպատակահարմար է շեշտը դնել շփման ու հաղորդակցության տարբեր տեսակների

վրա, կամ նույն տեսակի հետ աշխատանքներն այնպես կազմակերպել, որպեսզի առաջադրանքներն ապահովեն այս կամ այն կարողության ու հմտության աստիճանական զարգացումն ու խորացումը: Ցույց տալու համար, որ մտքեր, ասելիք, հույզեր ու զգացմունքներ հաղորդում և ընկալում ենք ոչ միայն բառերով, երեխաներին առաջադրանքների մի ամբողջ շարք կարելի է առաջարկել:

## Բարեկիրթ հաղորդակցություն

Բարեկիրթ շփման, հաղորդակցության կարողություններ ու հմտություններ ձևավորելն, անշուշտ, մեկ-երկու դասով չի տեղի ունենում: Սակայն հաղորդակցության առանձին դաերի ընթացքում որոշակի բաղադրիչներին անդրադառնալը և դրանց քննարկումը կարող են դասարանում, դպրոցում բարեկիրթ շփման որոշակի մշակույթի սկիզբ դնել: Բարեկիրթ շփման կարողությունների հետագա զարգացումը, հղկումը և ավանդույթի ձևավորումն արդեն բոլոր դասերի և ամենօրյա շփման խնդիրներն են:

Բարեկիրթ շփման, հաղորդակցության կարողությունների զարգացումը տարրական դասարաններում մի քանի խնդրի լուծում է ենթադրում.

- տարբերակել բարեկիրթ և ոչ բարեկիրթ խոսքն ու պահվածքը, բարեկիրթ խոսքի հնչերանգը,
- իմանալ բարեկիրթ, սիրալիր բառեր, բառակապակցություններ,
- կարողանալ կիրառել դրանք խոսքային տարբեր իրավիճակներին համապատասխան:

# Խոսքային ժանրեր

Մայրենիի ուսուցման ընթացքում մենք հաճախ ենք անդրադառնում տեքստին՝ ի դեմս պատմությունների, առակների, հեքիաթների և այլ գրական-գեղարվեստական նյութի: Սակայն լեզուն նախ և առաջ կենդանի հաղորդակցության միջոց է, ուստի շատ կարևոր է ուսումնական տեքստերին նաև հաղորդակցական ուղղվածություն տալ, ինչը մեծապես կնպաստի երեխայի խոսքի և հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

<<Խոսքային ժանրեր>> բաժնում անդրադառնում ենք ոչ թե գեղարվեստական գրական, այլ իրական խոսքում օգտագործվող ժանրերին (խնդրանք, հրաման, հրահանգ, դիմում, նամակ և այլն):

Այս համատեքստում մենք տեքստը դիտարկում ենք որպես խոսքային հաղորդակցական գործունեության արդյունք, անդրադառնում ենք տեքստի տեսակներին, ինչպես նաև խոսքային ժանրերին՝ որպես տեքստի տարատեսակների:

Տեքստը լեզվի ուսուցման, խոսքի զարգացման համար ամենակարևոր հասկացություններից մեկն է, քանի որ ցանկացած լեզվի ուսուցման գլխավոր նպատակը, ի վերջո, բանավոր և գրավոր ազատ հաղորդակցվելն է, ինչը ենթադրում է սեփական մտքերը կապակցված, տրամաբանված արտահայտելու, այսինքն՝ բանավոր և գրավոր տեքստ ստեղծելու կարողություն:

Տեքստը ընդհանուր թեմայով, հիմնական իմաստով և կառուցվածքով միավորված նախադասությունների խումբ է:

Որպես կանոն տեքստն ունենում է վերնագիր, որն արտացոլում է թեման կամ հիմնական իմաստը:

Տեքստի և նրա հիմնական հատկանիշների մասին իմացությունը օգնում է աշակերտներին արդյունավետ ձևավորել սեփական մտքերն ու խոսքը:

# Եզրակացություն

Առաջնորդվելով վերը նշվածով՝ կարող ենք ձևակերպել մայրենիի ուսուցման այն խնդիրները, որոնք առնչվում են այս դասաժամերի հետ.

- Բառապաշարի հարստացում և աշակերտների խոսքի քերականական կառուցվածքի մշակում՝ խոսքային իրավիճակին համապատասխան ճիշտ, արտահայտիչ լեզվական միջոցների ընտրության պահանջով,
- Լեզվական կանոնների ուսուցում և դրանց նպատակահարմար ու տեղին գործածություն՝ կախված խոսքային իրավիճակից, իմաստից և արտահայտման ոճից,
- Աշակերտների խոսքային գործունեության կատարելագործում և զարգացում, այլ կերպ ասած՝ <<ճիշտ>> խոսքի հիմնական հատկանիշների մշակում:

Վերը նշված խնդիրները միտված են արդյունավետ խոսքային կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, ուստի նաև՝ արդյունավետ շփվող և հաղորդակցվող անձի ձևավորմանը: Եվ միանգամայն հասկանալի է, որ այս հմտություններն ինքնաբերաբար չեն զարգանում, դրանք անհրաժեշտ է հստակ ուսուցանել:

<<Խոսք և հաղորդակցություն>> ժամերի կառուցվածքը պայմանավորված է ուսումնական խնդիրների և խոսքային իրավիճակների բովանդակությամբ և նպատակներով:

## Օգտագործված գրականության ցանկ

1.Կ.Թորոսյան,Գ.Թերզյան, Հ.Խաչատրյան, Խոսք և հաղորդակցություն, Երևան, 2011

**2.** Կ.Թորոսյան, Կ.Սարգսյան, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2008թ.

**3.** Հանրակրթության պետական չափորոշիչ

4.Ռոդարի Ֆ., Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան , 1995թ.